

և գաղթականութիւն հաստատեց այնտեղ: Հայքաղկեդօնական-ների աւելի եռանդուն մասը հասան մինչև իսկ Զինաստան: Մօնղոլները ընդհարուելով քրիստոնեայ հայերի հետ՝ նոցա ա-նուանեցին «արկառւն», իսկ այնուհետեւ այս կոչումը տարբածուեց: և մնացեալ քրիստոնեաների վերայ: Զինաստանից մինչև Պարսկաստան, Մոնղոլական տիրապետութեան ամբողջ ընդար-ձակ տարբածութիւնը, ինչպէս երեսում է հին պաշտօնական վա-ւերագրերից, միակ տեղն է, ուր քրիստոնեաները կոչում են «արկառւն», Որ «արկառւն» բառը հայկական ծագումն ունի, զեկուցողի կարծիքով, այդ մասին վկայում են ինչպէս հայց-հին մատենագիրների վկայութիւնները, նոյնպէս և իւր ուսում-նասիրած ԺԴ դարի՝ քարի վերայ գատած մի արձանագրու-թիւն: (H. B.)

ԹԱՒՐԻՉԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ստացանք Թաւրիդի Հայուհեաց Բարեգործական Միա-ցեալ Ընկերութեան 190^{3/4} ուս. տարեշրջանի տեղեկագիրն ու-հաշուեցայցը տպուած Ատրպատականի թեմական տպարանում: Ընկերութիւնը գտնւում է «Արեգակնախայլ շահնշահի» հովա-նաւորութեան ներքյ և պահում է մի շարք դպրոցական հաս-տատութիւններ Թաւրիզում և գաւառներում:

Տեղեկագրից երեսում է, որ ընկերութեան պահած գաւա-ռական հաստատութիւններն են.

1. Աղաղանի դպրոցը Դարադաղում, 18 երկու սեռի սա-ներով:

2. Բարառուիր և Բարանդուզ գաւառում, 60 եր-կու սեռի սաներով:

3. Բալանիշիր և 17 ա-շակերտներով:

4. Գեարդաբադի և Որմի գաւառում 74 ա-շակերտներով:

5. Դէբէլէքի և Սովուշրուզաղում 20 ա-շակերտներով: Այս դպրոցը պահում է Ստեփան Տէր Օհանեա-նի տարեկան նպաստով:

6. Դիզաթէքէյի դպրոցը Բարանդուզում—33 երկու սե-ռի սաներով, որոնցից 8 ը ասորի է: Սյս դպրոցը 1899 թուից պահում է Տիգրան Աֆրիկեանի օժանդակութեամբ:

7. Թովլալարի կամ Թաղիաբադի Արամ Ղաղարեան դըպ-րոցը Միանդուաբում—40 երկու սեռի սաներով:

8. Իքբ-Աղաջի դպրոցը Որմի գաւառում 38 աշակերտով:

9. Նախիջևան—Թէփէի դպրոցը Նազուչայ գաւառում 80 երկու սեռի սաներով:

10. Որմիի դպրոցը համանուն քաղաքում 26 երկու սեռի:

սաներով, որ պահում է պ. Ա. Մելիք Ազգաբեանի օժանդակութեամբ:

11. Ռանուայի դպրոցը Որմի գաւառում 20 աշակերտով:
Յիշեալ տասնեմէկ ուսումնարաաններից 4 ը պահում է
քնկերութեան հաշուով, իսկ եօթը՝ բարերարների հաշուով. Այդ
բոլոր դպրոցներում ուսանում էին 320 աշակերտ և 100 աշա-
կերտունի:

Ընկերութիւնը Թաւրիզում ունեցել է հետևեալ հաստա-
տութիւնները.—

12. Մանկապարտէզ՝ Ղալայում—45 երկու սեռի սաներով.

13. » Լիլավայում—46 » » »

18. Գրադարան-ընթերցարան Ղալայի մանկապարտիզին
կից, որ ունի 500-ից ամելի ընթերցանութեան գրքեր և որից
օգտում է քաղաքի իդական սեռը:

Ընկերութիւնը այդ տարեցանում ունեցել է 68 տարե-
կան, 40 մշտական և 19 պատուաւոր անդամունի:

Ընկերութիւնը յիշեալ դպրոցների վերայ վերջին տարին
ունեցել է ծափք 40,654 դրան 84 կպ. իսկ ներկայումս ունի
գըամագլուխ 49890 դրան 70 կպ.:

Ընկերութեան վարչութիւնը աւետում է իւր տեղեկագ-
րում, որ «պ. Տիգրան Նֆրիկեանը, որ իր հաշուով պահում էր 2
երկսեռ դպրոց... յղացել է մի վերին աստիճանի մարդասէր
միտք, այն է 39 հայաբնակ գիւղ ունեցող, բաղկ. 1200 տնից,
Որմի գաւառու իր շրջակայքով պատու դպրոցական ցանցով...
մեծանուն բարերարը որոշել է այդ դպրոցների թիւը, որոնք
երկսեռ պիտի լինին, առ այժմ հասցնել 20-ի, նպաստ յատկաց-
նելով իւրաքանչիւրին տարեկան 250 թուման»:

ԴԵՐԱՍԱՆ ՄԱՔՍՈՒՏԵԱՆ

Պարիզի կոնսերվատորիայի վերջնական քննութեանը դրա-
մատիքական արուեստի բաժնում առաջին ոսկէ մեղայլ է ստա-
ցել, ինչպէս հաղորդում է Տ. Ա. լրագիրը, Սիլվէնի աշակերտ
հայագիի Մաքսուտեանը, որ արդէն հրաւիրուած է Պարիզի
գլխաւոր և լաւագոյն դրամատիքական թատրոններից մէկում
—Օդէոնում-առաջնակարգ կամիքական դերի համար: Ֆրան-
սիական մեծ թերթերի յայտնի քննադատներ կատուլ Մէնդէսը,
Ժիւլ Պլասին, Էմիլ Արէնը և այլն միարերան գովում են պ.
Մաքսուտեանին և նորա համար լաւ ապադայ գուշակում: